№ 114 Յունիսի 24 (Յուլիսի 6) 1881 Յունիսի 24 (Յուլիսի 6) № 114

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տարին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Հին-Նախիջեւանից։ Նամակ Բագուից։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Հայոց խնդիր։ Ֆրանսիա։ Յունաստան։ Արեւելեան Ռումէլիա։ Իտալիա։ Անգլիա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարսկաստանից։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Մի պատասխան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—

Յունիսի 16-ին

Ահա այսօր վեցերորդ օրն է, որ երեւում է գիսաւոր աստղը երկնքում։ Պառաւները այլ և այլ առասպելներ են պատմում աստղի առիթով։

Ծիսական ուսումնարանի քննութիւնը վերջացաւ։ բաւական թոյլ էին աշակերտները հայոց լեզուից։ Դրա պատճառն այն էր, որ Նախիջեւանցիք ուսման կէսին զզուեցրին հայոց լեզուի ուսուցչին, որ չը կարողանալով համբերել զանազան ինտրիգաներ, հեռացաւ իր հայրենիքը։ Չը նայելով որ հոգաբարձութիւնը աւելորդ նիւթական օժանդակութիւն չէր տալիս ռուս լեզուի վարժապետին, սա չը զլացաւ պարապել հայոց լեզուից էլ աշակերտների հետ։

Քննութիւններին բացի Նախագահից, ոչ ոք ներկայ չը գտնվեցաւ,—ոչ հոգաբարձուները, ոչ էլ քաղաքիս նշանաւոր անձինք։ Նրանց չէ հետաքրքրում թէ իրանց զաւակները ինչ են սովորել, ինչ առաջադիմութիւն, կամ յետադիմութիւն են արել ուսման մէջ։ Պարոնները երեւի տանը նստած չուբուխ են ծխում, թուղթ են խաղում։ Նախիջեւանցի հայը կատարեալապէս թուրքացել է...

Եղանակը Նախիջեւանում բաւական չոր է։ երբեմն երեկոներին հով է լինում։ Հարկաւոր մրթերքների գները թանգ չեն, կարելի է ասել, մինչև անգամ էժան են։ Դաշտերը արդէն հասել են և այս տարի մեծ առատութիւն կը լինի թէ հացի և թէ մրգի։

Օտարական

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Սաստիկ պարապված լինելով համալսարանի վերջնական քննութիւններով, ես միջոց չունեցայ Մոսկվայից իր ժամանակին պատասխանելու «Մեղուի» իմ դէմ ուղղած ուշունցներին։ Այժմ աւելի ազատ ժամանակ ունենալով, ես կասեմ այդ մասին մի քանի խօսք։

Ամենախոնարհ ներողութիւն եմ խնդրում «Մշակի» յարգելի ընթերցողներից, որ «Մեղուի» քաջագործութիւնների վրա խօսելով ես զուցէ վիրաւորեմ նրանց բարոյական զգացմունքը։ Բայց խօսել հարկաւոր է, հարկաւոր է նրա համար, որ ընթերցող հասարակութիւնը դարձեալ մի միջոց ունենայ ծանօթանալու այդ թերթի ուղղութեան, բարոյական և մտաւոր ուժերի հետ։

Սրանից մի փոքր առաջ «Բիկոնսֆիլդ և Գլադստոն» վերնագրով յօդուածում «Մշակի» մէջ խօսելով Գլադստոնի նոր օրէնքի մասին, յայտնել էի այն պարզ և ամենին հասկանալի միտքը, թէ այդ օրէնքը իր պրինցիպով և տենդենցիաներով ներկայացնում է մի նոր ապացոյց, որ ահագին զանազանութիւն կայ տօրիների և վիգերի մէջ,—մի զանազանութիւն, որ «Մեղուն» հերքում է առանց փաստերի։ Նոյն յօդուածում ես յանդիմանում էի «Մեղուին», որ պատմութեան վրա հասկացողութիւն չունենալով, բերանը բաց ի զուր տեղը հայհոյում է նրանց, որոնք արժանաւորապէս գնահատում են երկու կուսակցութիւնների քաղաքականութիւնը։ Յօդուածիս պատասխան կայ «Մեղուի» № 71-ում։ Ճշմարիտն ասած ես կարծում էի, որ «Մեղուի» խմբագիրը, ինչպէս մանագէտ-պատմաբան (ասում են!), փաստերով կը պաշտպանի իր արած նոր գիւտը պատմութեան մէջ թէ տօրիների և վիգերի մէջ զանազանութիւն չը կայ նրանց քաղաքականութեան վերաբերութեամբ։ Դուրս եկաւ, որ ես սխալվեցի նրան այդքան ազնիւ կարծելով։ Սխալս անշուշտ վիրաւորական կը լինի նրա համար,—խնդրում եմ ներողութիւն։ «Մեղուն» միշտ պահանջում է ուրիշներից փաստեր, իսկ ինքը սարսափելի չէ սիրում բերել իր կողմից։ Մանաւանդ մի այսպիսի հարցում, որ առանց ապացոյցների խօսելը խարեբայութիւն կը լինի, մեր պատմաբանը նոյնպիսի քաջութեամբ է փախչում փաստերից, ինչպէս նրա բարեկամ Սարգիս Ղազարեան Նազարեանցը պարտքերից։

Ինքը այժ չունենալով պատասխանելու, գցում է ինձ իր սրամիտ ֆելիետոնիստի բերանը։ Երևի խմբագիրը կը բացատրի այդ նրանով, որ ինքը անձամբ արժան չէ համարում պատասխանել, բայց ես ի հարկէ բացատրում եմ այդ տգիտութիւնով։ 20 տարին տուել է նրան լաւ փորձառութիւն՝ երբ պատասխանելու ոչինչ չը կայ,—պատուիրել Քաղքցուն մի քանի ընտիր ուշունցներ կպցնել հակառակորդին։ Գոնէ բաժանորդները կասեն՝ «իսօ էլի պատասխանեց, խօսքի տակի չը մնաց»։ Պ. Քաղքցին ի հարկէ շատ ուրախ է լինում այդ ժամանակը։ Միամտութեամբ համոզված լինելով, թէ իր սրախօսութիւնները այնքան թունաւոր են, որ կարող են մի ակնթարթում գետին գլորել մարդու, այդ ծիծաղաշարժ պարոնը չպառում է աջ ու ձախ ինչ որ գալիս է բերանը։ Գրելիս ի հարկէ սովորաբար նա մոռանում է ամենայն բան՝ թէ հասարակութիւնը, թէ ընթերցողի բարոյական զգացմունքը, թէ լրագրի կոչումը... Առատ բանաստեղծական ներշնչողութեան ներքոյ, տենդային արագութեամբ նա ստեղծում է ուշունց ուշունցի ետեւից, մէկը միւսից գեղեցիկ, կատարելագործված։ Այդպէս են աշխատում երեւելի բանաստեղծները, գիտնականներ, կոմպոզիտորներ։ Այդպէս է աշխատում և մեր երեւելի ուշունցնատուն։ Նրա հանճարի ծնունդներից մէկն է իմ դէմ ուղղած պատասխանը։ Պատասխանը ուշունցով սկսվում է, ուշունցով շարունակում և ուշունցով վերջանում։ Ամենից առաջ պարոնը ինձ պարգևում է «մղոսի կամ տիրացու» տիտղոսը, համոզված լինելով որ դա շատ սաղում է ինձ... (Պ. Քաղքցի! փոքրդ ինչ ողորմած եղէք, խնայեցէք ինձ! Չէ՞ որ ձեր սպանիչ սրախօսութիւնը կարող է ինձ բոլորովին ոչնչացնել, մեռցնել...)։ Յետոյ գալիս են մէկ մէկու ետեւից ընտիր ընտիր, գոյնզգոյն ուշունցներ։

Ուշունցներին ես ի հարկէ չեմ կարող նոյնութեամբ պատասխանել։ Ուշունցը անզարգացած, վայրենի և բարոյապէս թոյլ մարդու զէնք է։ Suum cuique. կասեմ միայն երկու խօսք պ. Քաղքցու ուշունցներով համեմած մի քանի մրթերի վրա, որոնք չլացնում են մարդու իրանց խորութեամբ և քանիմացութեամբ։

Պ. Քաղքցին բարկութիւնից կատարեալ կատաղում է, որ ես «յանդգնել եմ» Բիկոնսֆիլդի քաղաքականութիւնը զզուելի կոչել։ Պատուելի պարոն! Եթէ դուք պատմութիւն չը գիտէք, մթթէ գոնէ լրագիրներ անգամ չէք կարդում։ Վերցրէք հէնց միայն ռուս լրագրութիւնը, թերթեցէք ազատամիտ օրգանների այն համարները, որոնք նուիրված են Բիկոնսֆիլդի մինիստրութեան ներքոյ, Բայակէթի և Ալաշկերտի մէջ դորձերը ամենաանմխիթար դրութեան մէջ են։ Ազգաբնակութիւնը նոր է սկսել շունչ առնել վերջին սովից յետոյ, բայց թիւրքաց կառավարութիւնը դարձեալ պահանջում է ժողովրդից նրա վրա մնացած ապառիկ հարկերը։ Սովելոց խնամող մասնաժողովի ջանքերով դիզված հացի պաշարները ծախվում են աճուրդով և ձեռք բերված փողը գործ է դրվում հարկերը վճարելու վրա։ Մուշի գլխաւոր դատաւորը իր տեղից հրաժարեցրած է, որովհետև իրան թոյլ տուեց բողոքել մուտեսարիֆի գործունէութեան դէմ, որ ճնշում էր Աբօրիջի գիւղի բնակիչներին։ Բայազէթի քրէական դատարանի նախագահը հրաժարեցրած է իր պաշտօնից, որովհետև գանգատվեց մուտեսարիֆի վարմունքի դէմ։ Նոյն փոփոխութիւնները կատարվում են Էրզրումի, Երզնկայի, Բայբուրդի և այլ տեղերի մէջ և ակներև է որ կառավարութեան նպատակն է այդ տեսակ կարգադրութիւններով հեռացնել տեղական դատարաններից քրիստոնեայ պաշտօնեաներին։

Հայոց պատրիարքը դիմեց անգլիական մինիստրներին մի ուղերձ ուղարկելով Ընդանց, որի մէջ նա խնդրում է Անգլիային գթալ Հայաստանի վրա և որքան հնար է շուտով ձեռք տալ հայոց խնդրի լուծելուն Բերլինի դաշնագրի 61-երդ յօդուածի վրա հիմնվելով։ Հայոց պատրիարքը յայտնում է սրա հետ այն միտքը որ հայոց խնդրի լուծման ամենալաւ և ամենահիմնաւոր միջոց կը լինէր տալ Հայաստանին մի ինքնավարութիւն Լիբանանի վարչութեան պէս, որ անշուշտ նոյնքան սիրով և համակրութեամբ կողջունէին Հայաստանի թէ քրիստոնեաները և թէ մահմեդականները։

„Times“ լրագիրը հաղորդում է որ անգլիական նախկին դեսպան Կ. Պոլսում Գօշէն, անցնելով Բերլինում, ջանում էր ձեռք բերել Գերմանիայի մասնակցութիւնը հայոց խնդրի վճռելու ժամանակ։ Բայց Բերլինի կաբինէտը յայտնեց, որ իր կարծիքով զբաղվել այժմ հայոց խնդրով տարաժամ կը լինէր։

Ուրեմն, երբ թիւրքիայի հայը տանջվում, գաղթում է, անհետանում է,—Գերմանիան տարաժամ կամ անժամանակակից է գտնում պարապել հայոց խնդրով։ Երևի իշխան Բիսմարկ այն ժամանակ յարմար և ժամանակակից կը համարի զբաղվել հայոց խնդրով, երբ այլ ևս ոչ մի հայ Հայաստանում չի մնայ։

Համայնքների ժողովի 25 յունիսի նիստի մէջ Բէյլէնդ պատգամաւորը ուշադրութիւն դարձրեց թիւրք-անգլիական կոնվենցիայի վրա, յայտնելով այն միտքը որ ժամանակ կը լինէր արդէն դադարեցնել կոնվենցիայի ոյժը։ Վիճաբանութիւնների ժամանակ Գլադստոն զովեց Գօշէնի քաղաքականութեան եղանակը և յայտնեց իր ցաւակցութիւնը որ Գօշէնին չաջողվեցաւ մնալ անգլիական դեսպան Կ. Պոլսի մէջ մինչև Հայաստանի մէջ վերանորոգութիւնների մտցնելը։ Մի և նոյն ժամանակ Գլադստոն յայտնեց որ Կ. Պոլսի նոր անգլիական դեսպանին, լորդ Դէֆֆէրինին տուած հրահանգի առաջին յօդուածում մատնացոյց է առած որ սա իր ամբողջ եռանդը պէտք է գործ դնի այդ նշանաւոր խնդիրը վճռելու համար։ Գլադստոն իր բացատրութեան մէջ յիշեց և այն որ Գօշէն Բերլինի միջով անցնելով հրաւիրեց գերմանական կառավարութեանը մասնակցել հայոց խնդրի վճռելու մէջ, բայց գերմանական կառավարութիւնը պատասխանեց որ նա զօրեղ միջոցների գործ դնելը այդ հարցի վերաբերութեամբ անժամանակակից է համարում։

ՖՐԱՆՍԻԱ

—

Էպինալի մէջ ժիւլ Ֆերրի արտասանեց հեռաւեալ ճառը։ Մի քանի շաբաթից յետոյ լինելու պատգամաւորների ընտրութիւնները ազատ կը լինեն կառավարութեան միջամտութիւնից։ Ֆրանսիան ինքնիշխան է։ Ֆրանսիան ինքնիշխան է։ Ֆրանսիան ինքնիշխան է

մութենից։ Ընտրութիւնները կը կատարվին չափաւոր հանրապետական ուղղութեամբ և աչքի առաջ չեն ունենայ սահմանադրութեան վերաքննութիւնը։ Այնուհետև մինիստր Ֆերրի մատնացոյց եղաւ արմատականների անկօրութեան և այն վերանորոգութիւնների վրա, որոնց իրագործել են չափաւոր հանրապետականները։ Նա յայտնեց, որ հանրապետութիւնը ժողովրդի վճարած հարկերը 260 միլիօնով փոքրացրել է։ Ապագայ ընտրութիւնների իսկական նպատակն է մինչ այն ատենն թուլացնել միապետականներին, որ, եթէ մինչև անգամ նրանք միանան արմատականների հետ, այնու ամենայնիւ անկարող լինեն վնասել հանրապետութեանը։ Երկիրը վրդովված չէ, շարունակեց Ֆերրի, այլ ընդհակառակը բաւական է, տեսնելով իրագործված վերանորոգութիւնները, տեսնելով, որ Ֆրանսիան ոչնչացրած չէ, որովհետև նրան անկարելի է ոչնչացնել։ Հանրապետութեան համար անհրաժեշտ է բոլոր կուսակցութիւնների միաբանութիւնը և Գրեվիի խոհեմութիւնը։

Մարսելից հաղորդում են, որ յունիսի 7-ին առաւօտեան 8 ժամից մինչև երեկոյեան 11 արիւնահեղ կռիւ է եղել իտալացիների և Ֆրանսիացիների մէջ։ Ասում են, որ երեք մարդ սպանված են և շատերը վիրաւորված։ Քաղաքային խորհրդարանի նիստերը անընդհատ շարունակվում են։ Քաղաքի հիւրանոցները փակված են։ Մարսելի զանազան մասերում կռիւը շարունակվում է։ Հանրապետական պրոկուրորը արդէն քննութիւն է սկսել և 65 մարդ կալանաւորված են։

Հանրապետութեան նախագահ Գրեվի յայտնել է մի քանի պատգամաւորներին, որ նա չի այցելի Ֆրանսիայի հարաւային մի քանի նահանգները, որովհետև շատերը այդ ճանապարհորդութիւնը կարող են նրանով մեկնել, որ Գրեվի կամենում է ազդել պատգամաւորների ապագայ ընտրութիւնների վրա։

Ֆրանսիական լրագիրները միաձայն պախարակում են գինուորական ծառայութեան ժամանակամիջոցի փոքրացնելը։ Միայն „République Française“ լրագիր պաշտպանում է այդ օրինագիծը։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Յունական մինիստրութեան մէջ մի քանի փոփոխութիւններ կատարվեցան, որոնք արտաքին գործերի հետ ոչինչ յարաբերութիւն չունեն։ Կօրինֆի պարանոցը փորելու և նրան ջրանցք դարձնելու մասին պայմանագիրը յանձնվեցաւ գեներալ Տիւրին, որ այդ գործին ձեռնարկում է Լեսսեպսի հետ։ Այդ ձեռնարկութիւնը մտադրված էր դեռ հին ժամանակներում և Ներոնի թագաւորութեան ժամանակ աշխատանքները ըսկսված էին։ Բելգիական երկրաչափը ուղևորվեցաւ Կօրինֆ աշխատանքների համար պատրաստութիւններ տեսնելու նպատակով։ Գործը աշունքին կը սկսվի։ Ջրանցքը պէտք է պատրաստ լինի հինգ տարուց յետոյ։ Զմեռ ժամանակ վտանգաւոր Մատապանի մօտ իւրաքանչիւր տարի անցնում են 1,300 փօստային շոգենաւեր, նոյնքան առևտրական և մասնաւոր և 300 պատերազմական։ Ջրանցքը փորելուց յետոյ Ադրիական ծովից գնացող շոգենաւերը 24 ժամ կը վատնեն, Իտալիայից գնացողները 14—18, իսկ Գիբրալտարից 8 ժամ։

ԱՐԵՒԵԼԵԱՆ-ՐՈՒՄԵԼԻԱ

Ֆիլիպօպոլից հաղորդում են, որ Ռումելիայի մէջ եղած պատգամաւորների ընտրութիւնների ժամանակ կուսակցական կռիւները մինչև այժմ չեղած չափերի են հասել։ Նահանգներից ստացված տեղեկութիւնների համեմատ մի քանի ընտրողները մինչև անգամ անձնական անբաւականութիւններ են ունեցել, այնպէս որ ընտրութիւնների ժամանակ պատահած անկարգութիւնների պատճառով ներկայումս բաւական շատ քրէական գործեր են սկսված։ Արմատական և չափաւոր կուսակցութիւնները կարողացան հաւասար թուով պատգամաւորներ ընտրել։ Ընդամենը պէտք է 18 պատգամաւորներ ընտրվէին, որոնցից 9 չափաւորներ են, իսկ մնացածները արմատական։ Պատգամաւորներից 16 մարդ բոլգարացիներ են, իսկ երկուսը թիւրք։ Մինչև անգամ Ֆիլիպօպոլի մէջ քաղաքական կռիւը չափազանց աղմկալի էր։ Այդտեղ բոլգարացիները ընդդիմադրում էին թիւրքերին և յոյներին։ Երբ կասկածելի դարձաւ, որ բոլգարացի կանդիդատը կարող է ստանալ ձայների մեծամասնութիւն, Ֆիլիպօպոլի եպիսկոպոսի միջնորդութեամբ բոլգարացի կուսակցութիւնները միացան և համաձայնութեամբ քուէարկեցին։ Այնու ամենայնիւ թիւրք կանդիդատը ձայների նշանաւոր մեծամասնութիւն ստացաւ։

Ադրիանոպոլից ստացված տեղեկութիւնների համեմատ այնտեղ սպասում են Ռէուֆ-փաշայի վերադարձին, որին համարում է այդ վիլայեթի ամբողջ ազգաբնակութիւնը։ Ռէուֆ-փաշա նոյնպէս ցանկանում է վերադառնալ և նրա կուսակիցների կարծիքով այդ ցանկութիւնը կը կատարվի։

ԻՏԱԼԻԱ

Հռոմի ամսագիրներից մէկի մէջ „Զօրքեր և քաղաքականութիւն“ վերնագրով տպվեցաւ գեներալ Մեցցակապօի յօդուածը, որով հեղինակը աշխատում է ապացուցանել, թէ Իտալիան իր զինուորական ոյժերը պէտք է լաւացնէ և հասցնէ այն գրութեանը, որի մէջ գտնվում են այլ ազգութիւնների զօրքերը։ Այդ գործը անհրաժեշտ է ոչ թէ նուաճողական նպատակների, այլ Իտալիայի անկախութիւնը պաշտպանելու համար։ Հեղինակը ապացուցանում է, որ վերջին պատերազմների փորձերը անհրաժեշտ են դարձնում ամրոցների կառուցանելը։ Գեներալ Մեցցակապօ խորհուրդ է տալիս իտալական պարլամենտին մի անգամից հատատել զօրքերի դրութիւնը բարելաւելու համար անհրաժեշտ գումարը և նրա հատուցումը բաժանել երեք տարիների վրա։ Վերջը նա աւելացնում է, որ Իտալիայի զինուորական ոյժերի բարւոքելը եւրօպական քաղաքականութեան համար մի գրաւական կը լինի։

Իտալիայի մէջ երկու անգամ միմեանց ետևից պատահած մինիստրական դժուարութիւնները ստիպեցին պարլամենտին զգուշութեամբ գործել։ Ազատամիտ կուսակցութեան անդամները համոզվեցան վերջապէս, որ աւելի հեշտ է կորցնել իշխանութիւնը, քան թէ նրան ձեռք բերել։ Նրանք անհրաժեշտ համարեցին գոնեա ժամանակաւորապէս թողնել անձնական հաշիւները և օգնել կառավարութեանը ընտրողական օրինագիծ վաւերացնելու համար, որի ուշացնելու պատճառը միշտ այդ կուսակցութիւնն էր դառնում։

Պարլամենտը արդէն վաւերացրեց ընտրողական օրէնքի գլխաւոր կէտերը և այդ աջողութեան պատճառը նոր մինիստրութեան եռանդոտ ընթացքն էր։

Ընտրողական օրէնքի հեղինակ՝ արդարութեան մինիստրին բաւական դժուար էր հերքել իր բազմաթիւ հակառակորդների ասածները։ Նրա ճառը շարունակվում էր երկու նիստ և երևում էր, որ այդ մասնագէտը հարցը բազմակողմանի ուսումնասիրել է և անուշադիր չէ թողել հարցին վերաբերեալ պատմական և վիճակագրական տեղեկութիւնները։ Դրանից լաւ պաշտպան կառավարչական օրինագծի համար անկարելի էր գտնել։

Այսպիսով ընտրողական վերանորոգութիւնը երևակայութենից իրականութեան է հասել։ Այսուհետև վիճաբանութիւններ կարող են ծագել ընտրողական եղանակի մասին։

ԱՆԳԼԻԱ

„Daily News“ լրագրի խօսքերի համեմատ անգլիական կառավարութիւնը մի շրջաբերական ուղարկեց Միացեալ-Նահանգների կառավարութեանը, որ ուշադրութիւն է դարձնում Ֆենիիների ցոյցերի վրա, որոնց կենտրոնատեղին Նիւ-Եօրկն է։ Իրլանդական վարչութիւնը արգելեց ժողովներ Կիլդարի և Մենագի մէջ և ազգարարութիւններ հրատարակեց, որոնք համոզում են ազգաբնակութեանը չը մասնակցել Կօրկի կոմսութեան մէջ լինելու ժողովներին։ Դուբլինում կալուածական միութեան ժողովի մէջ արտասանած վերջին ճառերը չափաւոր բնաւորութիւն ունեն։ Ճառախօսները պախարակում էին զօրքերին արած ընդդիմադրութիւնը, որովհետև երկու կողմի ոյժերը հաւասար չեն, բայց համոզում էին Ֆերմերներին ընդդիմանալ կալուածատէրերին։

„Doterel“ նաւի կօրուստը, Լիվերպուլի և այլ տեղերում կատարած յանցաւոր փորձերը ոգևորեցին Միացեալ-Նահանգների Ֆենիիներին, աւելացրին նուիրատուութիւնների չափը և դրդեցին իրլանդացիներին շարունակել իրանց ընդդիմադրութիւնը։ Ամերիկայի Ֆենիիները յայտնեցին, որ նրանք գիտէին „Doterel“ նաւի ճայթեցնելու մտադրութիւնը։

Գլադստոն մտադիր էր առաջարկել համայնքների ժողովին, որ նա շատպեցնի կալուածական օրինագծի քննութիւնը, բայց մինիստրը այդպիսի առաջարկութիւն չարաւ, որովհետև մի կողմից չէր կամենում դայրացնել ընդդիմադրական կուսակցութեանը, իսկ միւս կողմից յոյս ունէր իր ժամանակին վաւերացնել օրինագիծը, առանց սահմանափակելու համայնքների ժողովի

անկմանը և մանաւանդ նրա մահուանը։ Բաղդալինդիր, կեղտոտ, կոյր, նեղ, գզուելի, եսական,—այդ ածականները դուք կը գտնէք ամեն մի քայլափոխում։ Ես կը բերեմ միայն այստեղ բուլգարական «Народный Гласъ» լրագրի խօսքերը Բիկօնսֆիլդի մահուան առիթով՝

Լորդ Բիկօնսֆիլդ վախճանվեցաւ
Անհետացաւ նա խոր մթութեան մէջ,
Եւ Լօնդօնից մինչև Բատակ
Ամեն ազնիւ մարդ խնդում է։

«Այո—շարունակում է լրագիրը—յիշելու արժանի է այն մարդը, որի անուան հետ չարագուշակ կերպով կապված են մեր պատմութեան վերջին օրերը։ Այդպիսի մարդիկների անունը հեշտ չէ մոռացվում։ Այն մարդը, որ Ներոնի կամ Կալիգուլայի պէս ծափահարում էր սարսափելի թշուառութիւններին, որ իր քաղաքականութեամբ յարուցեց մեր երկրի աւերումը, որ վերջին պատերազմի պատճառը եղաւ, որ երկու միլիոն ժողովուրդ ստրկութեան հասցրեց—այդպիսի մարդը, այո, արժանի է յիշելու, արժանի է և անէծքների։»

Պ. Քաղքցին իրան յատուկ սրամտութեամբ մտաւոր գեղեցկութիւն է համարում Բիկօնսֆիլդի վրա յարձակվելը, որովհետև նա «Անգլիայի ղեկավար էր... Նրա վրա աշխարհը զարմանում էր... հանճար էր»։ Ի՞նչ է դուրս գալիս։ Ամբողջ ազատամիտ մամուլի ներկայացուցիչները, որոնք բոլոր այժմ յարձակվում են Բիկօնսֆիլդի վրա, մասնաւորապէս զեղխված են. արեգակի լոյսի պէս պայծառ և անարատ միաք պահպանել են միայն՝ Կատկովը և «Մեղուի» ուշունցնատուները, որոնք երկրպագում են հանգուցեալ լորդի յիշատակին։ Ուրեմն. պ. Քաղքցի, ձեր լոգիկայով բաւական է միայն զեկավար լինել, եսականութեան և լրբութեան հանճար լինել և աշխարհ զարմացնել դրանով—որ պատկառելի անուն ժառանգել։ Ուրեմն Բիսմարկի առաջին պէտք է խունկ ծխենք, Մանկունու ձեռքերը լիզենք, Յովհաննէս 4-դի յիշատակը սուրբ համարենք, ձեզ էլ ասենք, պ. Քաղքցի Քռի ափում խմբագրատան բալկօնի հանդէպ արձան կանգնեցնենք, որովհետև ուշունցնատութեան հանճար էք... Չէ՞ որ ձեր սրամիտ գլուխը այդ թոյլ է տալիս։

Դուք, պ. Քաղքցի, ինձ անուանում էք մանուկ, կաթնակեր։ Կը նշանակի ես այժմ մի տգէտ և անզարգացած մարդ պէտք է լինեմ։

Եթէ այժմ ես այդպէս եմ, ուրեմն ինչ պէտք է լինէի սրանից 7 տարի առաջ, չէ՞ որ մի բոլորովին յիմար երեխայ... Իսկ 7 տարի սրանից առաջ ես սարսափելի մեղուական էի, և «Մեղուի» մէջ մինչև անգամ մի ինքնուրոյն վէպիկ էի ապել... Լաւ լրագիր էք ունեցել! Վերջապէս դուք ինձ խորհուրդ էք տալիս, որ շատ խոսուտեմ Բիկօնսֆիլդի և Գլադստոնի քաղաքականութիւնը հասկանալու համար։ Ոչինչ չունեմ ասելու։ Դուք փորձառու մարդ էք. անշուշտ մի քանի տարի շարունակ այդ կերակրովն էք սրնընդվել, որ այդպէս լաւ հասկանում էք յիշեալ քաղաքականութիւնը։

Ձեզ հետ սրանից աւելի խօսելը աւելորդ է, պ. Քաղքցի։ Մի անխոհեմ հարց միայն կառաջարկեմ ձեզ։ Մինչև երբ պէտք է կերակրէք հայ հասարակութիւնը ձեր անհամ տափակախօսութիւններով և ուշունցներով։ Ախար ժամանակը անցնում է, տարին տարուց յետոյ գլորվում է, հասարակութիւնը զարգանում է, նոր պահանջներ զգում, թարմ և կենդանի մտաւոր կերակրի փափագում,—իսկ ձեզ մօտ՝ նոյն ջուրը և նոյն ջրաղացը, ուղտի պէս ոչ պակաս ոչ կարճանում էք, ոչ երկարանում։ Քարացել էք թէ սաւել։ Մինթ կեանքը ձեր և ձերայինների վրա ոչ մի ներգործութիւն չունի։ Մինթ 20 տարին ձեզ չը համոզեց, որ ուշունցնատութիւնը, բամբասանքը, ինտրիգաներ լարելը, տգիտութեան սերմեր ցանելը, միամիտների աչքը թող փչելը—դա գործունէութիւն չէ կարող համարվել։ Իսկ ամբողջ կէս դար դուք այդպէս էք գործել։ Չէ՞ որ դուք մի քանի անգամ պարզել էք «մամուլի նշանակութիւնը», իսկ ինքներդ ինչ էք անում՝ հակառակում ձեզ ամեն մի քայլափոխում։ Օրինակներ բազմաթիւ են, անհամար են։ Մի քանի կրքոտ անձինք, ինքնասիրութիւնից վիրաւորված լրբաբար ծափահարում են ձեզ և դուք կուրօրէն համոզվում էք, թէ ձեր գործունէութիւնը՝ անհրաժեշտ է, ժամանակակից է։ Սխալվում էք։ Մի գործունէութիւն, որ հիմնված է մտաւոր և բարոյական ազդեցութեան վրա, երբէք անհրաժեշտ չէ կարող լինել։ Կը գայ ժամանակ և մօտ է այդ ժամանակը, որ կեանքի հոսանքը կը թուլացնի, կոչնչացնի այդ գործունէութիւնը, կը մաքրի մեր լրագրութիւնը կէս դար նրա վրա մնքող կեղտից։

Տօրիների և վիգերի քաղաքականութեան հետ ծանօթանալու համար թող «Մեղուի» պատմաբանը կարդայ դր. Ֆիշերի «Die Verfassung Englands» վերնագրով գիրքը. Վիլլիամ Լեկկիի «Անգլիայի պատմութիւնը XVIII դարու» և գտնէ ռուս ազատամիտ լրագիրներ ու ամսագիրներ։

Թիֆլիս։ Ս. Դաղեանց

ազատութիւնը։ Համայնքների ժողովի անդամներից մէկը կառավարութեանը հարց առաջարկեց Անգլիայի ապագայ յարաբերութիւնների մասին Տունիսի հետ։ Արտաքին գործերի մինիստրը սառնութեամբ ընդունեց այդ հարցը և հրաժարվեցաւ նրան պատասխանել, որովհետև պարլամենտական սովորութեան համեմատ մինիստրութեանը այդ հարցի մասին առաջուց ոչինչ յայտնի չէր։

Ասարալիայից գանգատներ են ստացվում չինացիների գաղթականութեան դէմ, որոնց թիւը 20,000-ի է հասնում։ Գաղթողները կատարելապէս աղքատ մարդիկ են և չափազանց նեղացնում են տեղացի բնակիչներին։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻԱՑԻՑ

Վան, 5/17 յունիս 1881

Նախորդ նամակովս ձեզ տեղեկութիւն տուած էի թէ Վանի ծովին հիւսիսային արևմտեան կողմը Խլաթ գաւառին մէջ երկրաշարժի վանդներ պատահած են. այս անգամ մանրամասն կը գրեմ։

Խլաթ գաւառը ծովին արևմտեան կողմն է դէպ հիւսիս։ Շատ բարեբեր տեղ է և պատուական տեսակ ցորեն կելնէ, որ գիր կը կոչուի և ուրիշ կերպով կը ցանուի քան թէ սովորական ցորենները։ Անցած տարի սովի ժամանակ Վանի հայ մատակարարող ամբարներէն մին ալ Խլաթ եղած է։ Այդ գաւառը նախ Մուշի կառավարչութեան տակ էր, բայց երբ Բաղէշ և Մուշ Վանի նահանգէն բաժնելով առանձին նահանգ կազմուեցաւ, Խլաթ գաւառի կայմակամը ուղղակի Բաղէշի իշխանութեան տակ մտաւ։ Կայմակամին (գաւառապետ) նստած տեղը ծովեզերեայ նաւահանգիստ գիւղ մ'է որ Սխլաթ կամ Խարապաշէհիր կը կոչուի։ Այս գաւառին մէջ ամենէն բազմամարդ գիւղն է Թեղուտ, որ բոլորովին հայաբնակ է և ունի 180 տուն բնակիչ։ Ծովեզրէն 2 ժամ հեռի է։ Երկրաշարժի մեծ զոհն եղած է այս գիւղն որ բոլորովին քանդված է. մի տուն անգամ չը կայ կանգուն մնացած։ Երկրաշարժի սաստիկ ցնցումը եղած է մայիս 18 առաւօտեան $6^1/_2$ ժամին (ըստ եւրոպացւոց)։ Այդ ժամանակ գիւղին երիտասարդները իրենց տաւարներով գնացած էին լեռները և կամ արտերը աշխատել, որով վանդէն ազատ մնացած են. բայց կիները, մանուկներ, և ծերերը, որոնք գիւղին մէջ իրենց տունը կը գտնվէին, փլատակներուն տակ թաղուած են։ Թեղուտ Բաղէշէն 7 ժամ հեռի է. երբ Բաղէշ կիմացուի այս սոսկալի դէպքը (երկրաշարժի սաստիկ ցնցումները Բաղէշի մէջ ալ զգալի եղած են), նահանգապետ փաշան Թեղուտ կը զրկէ Խաչմանուկեան Աւետիս էֆէնդին և զինուորական բժիշկ զօկտոր պ. Պօղոս և ոստիկանապետը (պոլիցիայի գլխաւորը) մի քանի զապտիանոցով որոնք իրենց հետ վրաններ կը տանեն բաց մնացած գիւղացիները պատսպարելու համար։ Փլատակները սկսած են փորել, որոց տակէն 92 մեռեալ դուրս եկած է, 40 արական և 52 իգական սեռէն. 55 հոգի ալ վիրաւորված, որոցմէ շատերուն բժշկվելու յոյս կայ, բայց 12 մահացու վիճակի մէջ են։ Կառավարութիւնը բայի մի քանի վրաններ զրկելէ ուրիշ օգնութիւն չէ արած նոցա ուտեստի համար։ 125 չափ ցորեն փոխ առած է միայն այդ վնասուած մարդոց որպէս զի յետոյ տուածը յետ առնէ։ Վանի անգլիական դեր-հիւպատոս պ. Կլէյտոն, որ Խլաթ գնացած էր երկրաշարժէն վնասուողներուն օգնելու, 50 շամ. ոսկի (450 ռուբլու չափ) բաժներ է նոցա առ այժմ և Վան վերադառնալով տեղեկագրած է այս դէպքը իր կառավարութեան։

Երկրաշարժէն մի օր յառաջ արդէն նշաններ սկսած էին երևիլ։ Թեղուտէն երկու ժամ հեռու գտնուող Ծղակ գիւղացի մի հայ՝ Ներսովթ (Նեմրուդ) լեռին շրջակայ անտառները կերթայ փայտ կտրել և անագին որոտումի ձայներ կը լսէ Ներսովթի ականջ։ Ներսովթի սարսուռը տափին վրայ ջերմուկներ կան, ուր գիւղացիները կը լուացուին։ Երկրաշարժէն մի օր յառաջ մի գիւղացի ջերմուկ կը մտնէ լուացուելու համար, բայց ջրին մէջ քամի եկած այնպէս սաստիկ կը յուզէ եղեր, որ զինք դուրս կը մղէ և գիւղացին վախնալով դուրս կելնէ ջրէն։ Ներսովթ լեռը 400 տարիի չափ յառաջ հրաբուխ մը բացուած է որմէ դուրս վազած լաւաները գաշտին մէջ քարացած են։ Այդ քարացած լաւաներու տեղը չինուած է Թեղուտ գիւղը։ Ներսովթ լեռի սարսուռի տափին վրայ։ Նոյն տափին վրա գտնուած Սբրայձոր գիւղն ալ, որ Թեղուտէն 2 ժամ հեռի է և բոլորովին հայաբնակ 20 տուն բնակիչով, երկրաշարժի ցնցումներ եղած են, բայց 2—3 տուն միայն քանդուած է առանց անձանց կորուստի։ Նոյնպէս և Ախլաթ գիւղն, որ Թուրքերէն Խարապաշէհիր կը կոչուի (15 տուն հայ կայ և 100 տուն Թիւրք)։

Ձեր ընթերցողներուն հարկ չը կայ մանրամաս նկարագրել թէ ինչ տեսակ թշուառութեան մէջ կը գտնուին այժմ երկրաշարժէն իրենց անձը հազիւ ազատած գիւղացիները։ Ոչ տուն ունին այժմ արևէն և անձրևէն պատսպարուելու համար, ոչ մի վերմակ գիշերը իրենց վրայ ծածկելու համար, ոչ ալ մի պատառ հաց ուտելու համար։ Լեռներ, սարեր կը թափառին մոլորած վայրենիներու պէս, ապառաժ քարերը իրենց գլխաբարձ կանեն գիշերները և խոտ ուտել սովորած են չը մեռնելու համար։ Արդէն ազքատ և թշուառ թեղուտցիներու *) այժմեան սոսկալի վիճակը՝ ոչ թէ մի հայ, այլ մի քարանրտ մարդ անգամ լսած տեղն սիրտը կոտր կոտր կը լինի։ Երբ անգլիացիները այդ խեղճ գիւղացիներուն կուզեն օգնել. կարելի է մթէ որ մեր ռուսասանցի արիւնակիցները անտարբեր մնան։ Կը լսեմք որ պ. Կամսարականն ալ իւր կառավարութեան գրած է այս սոսկալի դէպքին համար և նորա գթութիւնը խնդրած է։ Պ. Կամսարական ձեռքէն եկած օգնութիւնները չը խնայեր։ Խրիմեան հայրիկ, որ պաշտօնով Բաղէշ կը զրկէր արժ. Արիստակէս Տէր-Սարգսեանց վարդապետը, յանձնարարից որ Թեղուտ ալ երթալով, կարելի եղած օգնութիւնները անէ երկրաշարժէ վնասուողներուն։ Արժ. Ղևոնդ վարդապետ Փիրղալէմեանն ալ երկու օր յառաջ այնտեղ զրկուեցաւ Խրիմեան հայրիկէն, նոյն պաշտօնով։

Շէյխ Իրաղուլլանը դեռ Վան քաղաքն է։ Նահանգապետ փաշան հեռագրով տեղեկութիւն խնդրած է Բ. Դուռէն թէ մինչև որ ատիճան պատասխանատու կերպով պէտք է որ Կ. Պոլիս տանին շէյխը։

Պ. Փորթուգալեանի հարցաքննութիւնը կառավարութեան առջև դեռ կը շարունակուի։ Թէև ոչինչ չէ կրցած հաստատուիլ իւր վրայ, բայց կառավարութիւնը կը ջանայ վնիք յանցաւոր հանել որպէս զի այնտեղ աշխատող երիտասարդները յուսահատցունէ. բայց մի և նոյն ժամանակ սոսպուած է խոհեմութեամբ վարուիլ, Փորթուգալեանի ժողովրդական մարդ լինելէն զգուշանալով։ Միայն թէ Սրուանձտեանց Գարեգին վարդապետ որ իւր առաջնորդական փոխանորդ ամեն օր յարաբերութեան մէջ է նահանգապետ փաշային հետ՝ սենոգ և անտարբեր կը վարուի այս խնդրի մէջ, թէև ազգային վարժարաններն առաջնորդի իրաւասութեան տակ լինելով և Փորթուգալեանի առնախօսութիւնն ալ Հայրենասէր ընկերութեան վարժարանին մէջ եղած լինելով, Գարեգին վարդապետի պարտաւորութիւնն էր միջամտել այս խնդրին։ Բայց շատեր կասեն որ Գարեգին վարդապետ կաշխատի կառավարութեան միջոցով ճնշել այստեղի երիտասարդութիւնը, որ հրապարակին վրայ ազդեցութիւն ունեցող և գործող խումբ մը չը գտնուի, որպէս զի նահանգապետ փաշային միջոցով, որուն հետ շատ մտերիմ բարեկամ եղած է այժմ, կարենայ Վանի առաջնորդ դառնալ. սոսկալի ապերախտութիւն մը գործելով իւր բարերար և ուսուցիչ Խրիմեան հայրիկի դէմ որ այժմ Վանի առաջնորդն է, թէև ազգային գործերու կառավարութիւնը յանձնած է իւր փոխանորդ Գարեգին վարդապետին, որպէս զի այդ փոքրիկ մարդուն փառասիրական փոքրիկ ըզգացումները գէթ այդ կերպով յագեցած լինին։ Ի՞նչ ժամանակի եկած հասած ենք որ մեր ամենէն աւելի ազգասէր և հայրենասէր կարծած վարդապետներն ալ ազգի դատաճան և ապերախտ դուրս կը գան։ Ինչեր կը սպասէինք մենք Գարեգին վարդապետէն և ինչ եկաւ դուրս։ Արդեօք պէտք չէ՞ բնաւ կատարեալ վստահութիւն ունենալ այդ սեղզեստներուն դասակարգէն եղող ոչ մէկին վրայ ալ ....։ Մեր պատասխանը բացասական պիտի լինէր եթէ հրապարակին վրա Վարժապետեան Գերոէտներ և Խրիմեան հայրիկներ ալ չը գտնուէին։

Հրանտ

*) Թեղուտ գիւղը 300,000 ղրուշ (27,000 ռուբլի չափ) պարաք ունէր թէ կառավարութեան, տուրքի պատճառով, և թէ հայերու և քուրդերու որոցմէ տոկոսով փոխ ստակ առած են գիւղացիներ։ Պարտքի պատճառով Թեղուտ գիւղէն 136 մարդ պանդխտած կայ յորոց 132 կ. Պոլիս կը գտնուին և 4 ռուսահայաստան։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրէզ, 16 մայիսի

Երևանում հրատարակվող հայ լրագրի 16 համարում տպվեցաւ մի թղթակցութիւն Թաւրիզից, որի մէջ անաղնիւ կերպով չօչափվում էր պ. Օ. Տէր-Զաքարեանի պատիւը։ Յիշեալ թղթակցութեան հեղինակը Յ. Հալաճեանն է, մի յայտնի սրիկայ, որ Օրբելեանների կաակը Հընդկաստանում յայտնվելուց յետոյ, ազգանունը փոխեց, սկսեց իրան Օրբելեան կոչել, որպէս զի այդ պարարտ կտակից մի պատառ էլ իր բերանը գցէ։ Ի հարկէ, ոչինչ չը ստացաւ։

Թէպէտ ոչ ոքին հետաքրքիր չէ գիտենալ մի որ և իցէ բախտախնդիր Հալաճեանի կենսագրութիւնը, բայց ցոյց տալու համար, թէ որպիսի անձինք կամենում են մեր միամիտ հասարակութեան մէջ դեր խաղալ, նրա խաղաղութիւնը վրդովել, երկպառակութիւն սերմանել և ջրի պղտորութեան մէջ ձուկ որսալ,— ես կասեմ այդ պարոնի մասին մի քանի խօսք միայն։

Պարոնը իր մանկութեան հասակում ուղարկվեցաւ իր ազքատ ծնողներից Ղարադաղ, որպէս հասարակ ծառայ, սպասաւոր, որ իր համար մի պատառ հաց գտնէ։ Այնտեղից, յայտնի չէ ինչ անկարգութեան համար, փախաւ Ցաթեի վանքը, ուր մի քանի տարի մնալուց անելով, վարդապետների կօշիկներ սրբելով, գրել-կարդալ սովորեց։ Վերադառնալով մեր հայրենիքը, Թաւրէզ, նա մի ժամանակ փոստատան նամակ բաժանող էր, մի ժամանակ էլ սահմանագլխի վրա թէսքիրաճէի (անցագրեր նայողի) սպասաւոր էր։ Ով որ փոքր ի շատէ ծանօթ է Պարսկաստանին, կը հասկանայ, թէ ինչ կը նշանակէ թէսքիրաճէի սպասաւոր լինել։—Այդ կը նշանակէ սահմանից անցուդարձ անող պարսից հպատակ խեղճ մշակներին կողոպտել։

Զը նայելով, որ պարոնը ընտրում էր ծառայութիւնների ամենացածը, ամենասոնալը, այսու ամենայնիւ, ամեն տեղում խայտառակվեցաւ նա, ամեն տեղից արտաքսվեցաւ նա։ Այսպիսի անաջողակները մեզ մօտ, երբ ուրիշ գործ չեն գտնում, առհասարակ տէրտէր են դառնում, բայց պարոնը մտածեց վարժապետ դառնալ։

Նա քանիցս անգամ դիմում է Լիլաւայ թաղի հայոց դպրոցի հոգաբարձու պ. Օ. Տէր-Զաքարեանին և վարժապետութեան պաշտօն է խնդրում։ Պարոն հոգաբարձուին լաւ յայտնի լինելով Հալաճեանի ինչ բարոյականութեան տէր լինելը և որ ատիճան դիտութիւն ունենալը,—ի հարկէ, մերժում է։ Այստեղից ծագում է Ցաթեի վանքի խոհանոցի ուստաղի թշնամութիւնը դէպի պ. հոգաբարձուն, սկսում է այնուհետև նրա մասին զանազան կեղտոտ բամբասանքներ անել և մինչև անգամ փորձ փորձել նրան վնասելու։ Այդ բոլորը յայտնվում է տեղային դատաւորին և Հալաճեանը իր արժանաւոր պատիժը ընդունում է, ինչպէս որ կը պատժվեն ամեն մի լիրբ և անբարոյական մարդիկ։

Այդ բոլորից չը խրատվելով, Հալաճեանը իր թղթակցութեան մէջ զրպարտում է հոգաբարձու պ. Տէր-Զաքարեանին, իբր թէ նա դպրոցի փողերի մէջ անաղնութիւն է գործել և հրապարակաւ հաշիւ է պահանջում։ Թէև ոչ մի հոգաբարձի պարտաւորութիւնը չէ ամեն մի բախտախնդիր Հալաճեանի հաշիւ տալ, բայց հասարակական կարծիքը փարատելու համար, ես հարկաւոր եմ համարում յայտնել, որ պ. Տէր-Զաքարեանը իր հոգաբարձութեան հաշիւները արդէն տուել է 1880 թուականի մարտ ամսի 16-ին, Լիլաւայ թաղի հասարակութեանը, ի ներկայութեան Թաւրիզի սրբազան առաջնորդի։ Նոյն հաշուի պատճէնը, վաւերացրած սրբ. առաջնորդի ստորագրութեամբ, ուղարկում եմ «Մշակի» խմբագրատունը, որից պարզ երևում է, որ Տէր-Զաքարեանը ոչ թէ դպրոցի փողերի մէջ անաղնիւ է վարվել, այլ 1633 կռան $5^1/_2$ չափի էլ իր գրպանից է ծախսել մի աղքատ դպրոցի գործերը առաջ տանելու համար։*) Եւ այդ գումարը մինչև այսօր դպրոցը մնացել է նրան պարտական։

Այդ հաշուից յետոյ պ. Տէր-Զաքարեանը քանիցս անգամ իր հրաժարականը ներկայացրել է, որպէս զի արձակվի հոգաբարձութեան պաշտօնից, բայց թէ սրբազան առաջնորդը և թէ Լիլաւայի հասարակութիւնը, ի նկատի առնելով նրա բազմամեայ անձնանուէր աշխատութիւնը դպրոցի յառաջադիմութեան վերաբերութեամբ, միշտ խնդրելով պահել են պարոնին իր պաշտօնի մէջ։

Պ. Տէր-Զաքարեանի մատուցած ծառայութիւնները, թէ Թէհրանի հայոց դպրոցին, թէ այսուհետև դպրոցին և թէ մեր քաղաքի թատրօնական գործին, ինձ առիթ տուեցին ճշմարտութիւնը երևան հանելու համար գրել այդ նամակը, զգուշացնելով մեր ընթերցող հասարակութեանը Հալաճեանի նման մարդիկների մոլորութիւնից։

* * *

*) Մեր խմբագրատան մէջ ստացվեցաւ յիշեալ հաշուի պատճէնը վաւերացրած Ատրպատականի հայոց առաջնորդի ստորագրութեամբ։

Ն. Խ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին երկու շաբաթվայ ընթացքում Դիւֆօրի մահուան լուրը օրից օր սպասվում էր։ Դիւֆօր հռչակաւոր փաստաբան և պետական գործող էր, խիստ պահպանողական «միապետական» հանրապետական, թիւրի օգնական և մի ժամանակ նրա հակառակորդ քաղաքական ասպարիզի վրա, դուքս դը-Բրոլիի կարինէտից յետոյ առաջին մինիստր Մարշալ Մակ-Մահոնի ժամանակ, վերին ատիճանի ազնիւ և խիստ բարքի մարդ։ Դիւֆօր վերջին ժամանակները քաղաքականութիւնից իրան հեռու էր բռնում և մեծ մասամբ ապրում էր գիւղում։ Դիւֆօր ծնվեցաւ 1798 թվին և մասնակցում էր Ֆրանսիայում պատահած գլխաւոր շարժումներին և անցքերին։ Նա մնաց իր կաղուածքում մինչև վերջին րոպէն պահպանելով իր մաւոր ընդունակութիւնները։ Համոզմունքով հանրապետական լինելով, նա հակառակ չէր և սահմանադրական աղատամիտ միապետութեան։ Նա ջերմեռանդ կաթոլիկ էր և վախենում էր արմատականութիւնից. նա ցանկանում էր «հանրապետութիւն առանց հանրապետականների» թիւրի նման։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յունիսի։ „Новое Время“ լրագրին Հաւմից հեռագրում են, որ 19-ին յունիսի հասան Իտալիայի մայրաքաղաքը սլավեանական ուխտաւորները։ Կիրակի օր կը կատարվի հանդիսաւոր ժամասացութիւն, երեքշաբթի օր նշանակված է հրաժարական առդիենցիա պապի մօտ։ Հարաւային կաթոլիկ սլավեանների իւրաքանչիւր պատգամաւորութիւն կը ներկայացնի պապին մի առանձին ուղերձ։ Ուխտաւորների առաջնորդների մէջ երկպառակութիւն է ծագել, նրանց մէջ չը կայ համաձայնութիւն։ Խորվատիայի եպիսկոպոս Շարօսմայէր և Լեհաստանի եպիսկոպոս Լեդօխովսկի միմեանց ամենակատաղի թշնամիներ են։ Ռուս դիպլոմատական աշխատներ Բուտենև և Մոսլով վերջ դրին Վատիկանի հետ իրանց ունեցած բանակցութիւններին և ամառվայ արձակուրդ առնելով հեռացան Հաւմից։ Կարծում են նրանց հեռանալը մի տեսակ բողոք է պապի երկրային քաղաքականութեան դէմ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 յունիսի։ Պետական բանկի $5^0/_0$ տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 50 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 37 կ., չորրորդ 94 ր. 12 կ., ներքին $5^0/_0$ առաջին փոխառութեան տոմսակը արժէ 228 ր. 50 կ., երկրորդ 221 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 87 կ., երրորդ 92 ր. 75 կ., ոսկի 7 ր. 92 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,75 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա առժէ 212 մարկ 75 պֆ., Փարիզի վրա արժէ 262 ֆրանկ 25 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ТИФЛИССКІЯ ОБЪЯВЛЕНІЯ

НА ПОЛГОДА въ Тифлисѣ . . . . . 2 руб.

Для иногородныхъ . . . . . 4 „

на Дворцовой улицѣ въ домѣ Сараджева.

6—2

Ա. ՊՐԻԴՕՆՕՎԻ ԵՒ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՕՎԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ *կատարում է հետևեալ գործողութիւնները.* 1) *գնում է և ծախում է տոկոսաբեր թղթեր, սերիաներ և ոսկի,* 2) *պարտք է տալիս տոկոսաբեր թղթերի և ակցիաների գրաւականով,* 3) *ապահովում է ներքին* 1-*ին և* 2-*դ փոխառութեան տոմսակները իւրաքանչիւրը* 50 *կ.,* *օտարաքաղաքացիք պէտք է ուղարկեն մարկա և* 10 *կ. ապահովագրի համար,* 4) *ընդունում է մուտքեր ժամանակաւոր, ցպահանջումն և ընթացող հաշիւ,* 5) *ընթացող առանձին հաշիւ է բանում տոկոսաբեր թղթերի գրաւականով,* 6) *կատարում է զանազան հիմնարկութիւնների և մասնաւոր անձանց բանկային յանձնարարութիւններ:*

Գրասենեակը վերցնում է ապահոված գումարների համար $7\frac{1}{2}\%$, *առանձին ընթացող հաշիւներին* 8% *և պարտքեր տալիս է մեծ չափով:*

Վճարում է մուտքերին ցպահանջումն 5%, *ժամանակաւոր* $\frac{1}{2}$ *տարով* $5\frac{1}{2}\%$, 1 *տարով* 6%:

Գրասենեակը գտնվում է Սերգիեվսկայա փողոցի վրա, Պետական բանկի բաժնի հանդէպ, Ա. *Պրիդոնովի տանը:*

2—3 (2)

„ԽԵՆԹԸ“

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՖՖԻ

Տպված մաքուր թղթի վրա, գիրքը բաղկանում 400 *երեսից: Թիֆլիսում ծախվում է „Մշակի“ խմբագրատանը, „կենտրոնական գրավաճառանոցում“, „կովկասեան գրավաճառանոցում“ պ. Զաքարիա Գրիգորեանցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզարջեանցի, Հովուեանցի ծխախոտի մագազինները:*

Գինն է 1 *ռուբլ* 20 *կոպ.:*

ՋԱՆՋՈՒՂԱԶՈՎՆԵՐԻ *Մոսկվայի պարտատէրերի* **ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ Պ. Մ. ԼԵԲԵԴԻՆՍԿԻ** *ընդունում է քրէական և քաղաքական գործերի պաշտպանութիւնը Թիֆլիսի դատարանների մէջ: Խորհուրդները* **ԶՐԻ** *են տրվում: Ընդունելութիւն իւրաքանչիւր օր երեկոյեան* 5—7 *ժամը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Գոլովինսկի փողոց, տուն Միրիմանովի, Սաքարթվելո հիւրանոց:*

2—6

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲՐՕՇԻՒՐՆԵՐ

Ռուսերէն, հայերէն և վրացերէն

Ռուսերէն 30 *տեսակից* 30 *հատը* 1 *ռ. հայերէն* 3 *տեսակից* 50 *հատը* 1 *ռ. վրացերէն* 7 *տեսակից* 50 *հատը* 1 *ռ. մեր հասցէն.* Тифлисъ, Елизаветинская ул. № 71, Аврааму Амирханьянцъ.

3—20 (2)

---

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
մեբէլի և հայելիների:

Հրատարակութեամբ Ներսիսի Սիմէոնեանց *լոյս տեսաւ գերմանացի բժիշկ Շրեբերի „Տնային բժշկական մարմնամարզութեան“ գրքոյկի հայերէն թարգմանութիւնը* 45 *պատկերով, որոց միջոցաւ կարելի է կատարել առողջապահական բազմատեսակ մարմնամարզական կրթութիւններ ամեն տեղ, ամեն ժամանակ և առանց գործիքի: Նա յարմարացրած է ամեն հասակի արանց և կանանց համար: Գինն է* 40 *կոպ. Ծախվում է „կենտրոնական և կովկասեան գրավաճառանոցներում, նոյնպէս և պ. Մ. Վարդանեանցի մօտ.“* Тройцкій пер. типографія Вартанянца, въ Тифлисъ.

ՐՕՍՏՕՎ ԴՕՆԻ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆՏԷՐ ԵԱ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՕՎ *յայտնում է հետևեալը. Իմ ծխախոտի արդիւնաբերութեան մեծ պահանջը դրդեց Թիֆլիսի գործարանատէր Պիրալով և ընկ. և Գալեգովին նմանվել իմ արդիւնաբերութեան ձևին զանազան անուններով, մանաւանդ „ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎ“, „գեներալ ԳԷՅՄԱՆ“ և „գեներալ ՍԿՕԲՕԼԵՎ“: Նախազգուշացնելով իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հետևեալ նշանների վրա.* 1) *Հրապարակական հաւանութիւն* 1865 *թուականի Մոսկվայի հանդէսից,* 2) *Ոսկեայ մեդալ Մոսկվայի տեխնիկական հանդէսից* 1872 *թ.,* 3) *Պատուաւոր կարծիք* 1873 *թ. Վիէննայի աշխարհանդէսից,* 4) *մեծ մեդալ* 1876 *թ. Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհանդէսից,* 5) *Արծաթէ մեծ մեդալ* 1878 *թ. Փարիզի աշխարհանդէսից, իսկ այդ նշանները չունեցող արդիւնաբերութիւնը խնդրեմ կեղծ համարել: Մակեդոնիացի նոր երուսն սատցայ ամենալաւ* ՀՈՏԱԻԵՏ ԾԽԱԽՈՏ: *Լաւ յատկութեան ծխախոտ սիրողներին խնդրեմ դիմել Թիֆլիսի մէջ. Սպիրիդոն Իվանովիչ Պոպովին, Բամազովին, Բայանդուրովին, Միկիրտումովին, Բէժանովին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և դէպօն, որ գտնվում է Գոլովինսկի փողոցի վրա, Իշխան Բագրատիոն-Մուխրանսկու տանը: Այդ անձինք ուղղակի իմ գործարանից են ստանում ծխախոտը:*

Բօստովի 1-*ն գիլդիայի վաճառական և ծխախոտի գործարանատէր* ԵԱԿՕՎ ՍԵՄԵՈՆՕՎԻՉ ԿՈՒՇՆԱՐԵՕՎ:

12—12

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԷԼ *(սթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կատոլիկաց փողոցի անկիւնում* ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ *պահեստում:*

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

26—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ՐԱՖՖԻԻ „ԽԵՆԹԸ“** *անուանով վիպասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք դիմել* ՇՈՒՇԻ, *կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահտեսի-Յակոբեանցի տպարանը:* ԲԱԳՈՒ՝ *պ.* Ալեքսանդր Թարխանեանցին, ԹԱՐՎԷԶ՝ *պ.* Գրիգոր Բէջանեանցին.

Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арунянца АБѢЛУ АПРѢСЯНЦУ.

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, *մազերը ամրացնող և նրանց* **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** *վերադարձնող: Գինը* 2 *ռ. շիշը,* **ՓՈՍՏՅՈՎ** *ուղարկված* 2 *ռ.* 49 *կոպ.:* **ԱՆԳԼԻԱԿԱՆ** *խանութի մէջ:*

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, *մազերը ամրացնելու համար,* 1 *ռ. ամանը վրձին գլխաչափի դէմ,* **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** *և հոտաւէտ ջրեր և այլն:*

87—100

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի գինը			1 ռ. 5 կ.	Մոսկվայից բերվող թէյի հետ				Ֆ. 1 ռ. 30 կ.
—	—	—	1 ռ. 10 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ռ. 40 կ.
—	—	—	1 ռ. 20 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ռ. 60 կ.
—	—	—	1 ռ. 40 կ.	—	—	—	—	Ֆ. 1 ռ. 80 կ.
—	—	—	1 ռ. 60 կ.	—	—	—	—	Ֆ. 2 ռ. —
—	—	—	1 ռ. 80 կ.	—	—	—	—	Ֆ. 2 ռ. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ռ. —	—	—	—	—	Ֆ. 3 ռ.

99—100

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 *ռ.,* *ծրծողներ* 1 *ռ.,* *ծալվող սթոռներ* 1 *ռ.* 50 *կ.,* ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 *ռ.,* ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 *ռուբլ և աւելի, թէյի բաժակներ* 25 *և* 30 *կ., մի ման քրոցներ* 50 *կ., պատեալա ծխողների համար* 60 *կ. Ֆունտը, անգլիական* ՎԱՆՆԱՆԵՐ *և այլն ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

10,000 *զոյգ գուլբաներ* 25 *կ.—ից զոյգը,* 10,000 *զոյգ կանանց* ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 *կ.—* 1 *ռ.,* 7,000 *մատուցարաններ* 5 *կ.—*5 *ռ.,* 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 *ռ.—*35 *ռ.,* 400 *արշին բամպէյ.* 1 *ռ.—*1 *ռ.* 30 *կ., պարուսինա* 40 *կ.—*1 *ռ.,* 300 *հատ բէվոլվեր* 4 *ռ.—*35 *ռ.,* 700 *ալբոմ* ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 *ֆունտ թէյ* ԹԷՅԱՄԱՆՈՎ 1 *ռ.* 65 *կ.: Եթէ կամէք գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար: Ծախվում են* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** *մէջ:*

8—100

Մի երիտասարդ, որ գիտէ հաշուապահութիւն, ռուսերէն և հայերէն (двойная италіанская бухгалтерія) *ցանկանում է կանտորշչիկի պաշտօն. հասցէն կարելի է իմանալ պ.* Աւետիք Էնֆիաճեանցի *գրավաճառանոցում:*

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% **ԷԺԱՆ ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** *Մուրաբաներ, կոնֆեկտներ,* **ԿԱԿԱՕ**, *բրինձ,* ԱՄԱՆԵՂԷՆ, *բօկալներ, թասեր, երես լուանալու ամաններ, չայնիկներ,* ԲԱԺԱԿՆԵՐ, *կերակրի ամաններ* (судки), *մատուցարաններ,* ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, *գդալներ,* ԳՐԻՁՆԵՐ, *թուղթ, մատիաներ, տետրակներ,* ՀՐԱՑԱՆՆԵՐ, ԲԷՎՕԼՎԵՐՆԵՐ, *ալբոմներ,* ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, ՀԱԳՈՒՍՏ, *տրիկօ, պարուսին, թաշկինակներ, երեսսրբիչներ, կլեոնկա, գուլբաներ,* ԹԱՄԲԵՐ, ՊՕՐՏ-ՎԷՅՆ, *խեղրես, կօնեակ և այլն:* Թէյ *մեծ քանակութեամբ* ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ *համար* ՊՈՒԴԸ 44 *ռ.,* 46 *ռ.,* 48 *ռ.,* 50 *ռ.,* 52 *ռ.,* 54 *ռ., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել* **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ:**

Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԵՐԲԵՏ *մագնեզիա, խմոր* ԾԱՌԱԻԻ *դէմ,* ԽԻՆԱՅԻ *գինի ջերմի դէմ, կարբոլեան* ՓՕՇԻ, *հեղուկ և* ՍԱՊՕՆ, *բժշկական թուղթ վատերկլօզետի համար, պարսկական փոշի:*

22—100

ԱՄԱՐԱՆՈՑԻ ՀԱՄԱՐ *վերարկուներ* 4 *ռ.. ծալվող բազկաթոռներ* 2 *ռ.* 50 *կ. և մահճակալներ* 8 *ռ., փայտաթոռ* 4 *ռ., գամակի* 14 *ռ., բազկաթոռ-մահճակալ* 10 *ռուբլուց, բօկալներ* 15 *կ., էկստրակտ կաֆէ և կակաօ, հրացաններ, բէվոլվերներ, երեսսրբիչներ, գրիչներ և գրելու պիտոյքներ և այլն. կարելի է գտնել* ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ *մէջ:*

2—10

Մինչև առաջիկայ սեպտեմբեր լոյս կը տեսնի Ֆիզիկական, *ժողովրդական և քաղաքական* ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ *հայ տղայոց և օրիորդական ուսումնարանների համար: Ցանկացողները կարող են դիմել ուղղակի աշխատասիրողին հետևեալ հասցէով:*

Тифлисъ. Армянская Духовная Семинарія Нерсесьянъ. *Учителю А. Теръ-Акопьянцъ.*

Дозволено цензурою, Тифлисъ. 23 Іюня 1881 года.

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.